ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13.05 2025 թվականի № 14

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 2, ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԹԻՎ 4 ՆԻՍՏԵՐՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 6 ՆԻՍՏՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024թ. դեկտեմբերի 12-ի N 1989-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 52-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի գիտական խորհուրդը **որոշում է՝**

1. Սահմանել ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի ընտրության, պատրաստման և պաշտպանության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի՝ 2015 թվականի փետրվարի 11-ի թիվ 2 նիստում հաստատված՝ ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի ընտրության, պատրաստման և պաշտպանության կարգը, Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի գիտական խորհրդի՝ 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 6 նիստում հաստատված՝ ակադեմիայի մագիստրոսական թեզերի պատրաստման և պաշտպանության կազմակերպման կանոնակարգը և 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 4 նիստում հաստատված՝ ակադեմիայի բակալավրի կրթական ծրագրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԻՆՔԸ ԵՎ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Ք. ԵՐԵՎԱՆ

Հավելված 1
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի
. .2025 թ. № որոշման

ԿԱՐԳ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի ընտրության, պատրաստման և պաշտպանության կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է կրթահամալիրի սովորողների կողմից ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի ընտրության, պատրաստման ընթացակարգերը, ինչպես նաև ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության կարգը և գնահատման համակարգը:

2. Ավարտական աշխատանքը որակավորման աշխատանք է, որը կոչված է համակարգելու և ամրապնդելու շրջանավարտների գիտելիքներն ու կարողությունները և, որպես կանոն, պետք է ունենա գործնական նշանակություն՝ լուծի մասնագիտական որոշակի խնդիր (խնդիրներ):

3. Մագիստրոսական թեզը որակավորման աշխատանք է, որը վկայում է տվյալ թեմայի ուսումնասիրման մեջ հեղինակի անձնական ներդրման, տեսական գիտելիքների ու գործնական կարողությունների օգտագործմամբ ինքնուրույն գիտագործնական հետազոտություններ անցկացնելու ընդունակության մասին:

4. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի ուղղությամբ կատարվող աշխատանքներն իրականացվում են ուսումնական պլանով նախատեսված ժամանակի շրջանակներում՝ գիտահետազոտական աշխատանքի համար հատկացված ժամերի, մագիստրոսական թեզի և ավարտական աշխատանքի համար նախատեսված ժամերի հաշվին:

5. Սույն կարգը մշակվել է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքների, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1282-Ն հրամանի և «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կրթահամալիր) կանոնադրության հիման վրա:

2. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի թեմայի ընտրությունը

6. Ավարտական աշխատանքի թեման և ղեկավարը հաստատվում են ավարտական ուստարվա առաջին կիսամյակում՝ մինչև սեպտեմբերի 15-ը, իսկ մագիստրոսական թեզինը՝ մինչև առաջին կուրսի առաջին կիսամյակի ավարտը:

7. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի թեմաներն ընտրվում են կրթահամալիրի ամբիոններում՝ ամբիոնի նիստում նախօրոք քննարկված ու առաջարկվող թեմաների ցանկից:

8. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի թեմաները կարող են առաջարկվել գործատուների կողմից: Ամբիոնների կողմից առաջարկվող թեմաները, ըստ մասնագիտական ոլորտների, կարող են քննարկվել գործատուների հետ:

9. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի թեմայի ընտրության հարցում ամբիոնի կողմից կարող են ընդունվել նաև կրթահամալիրի սովորողների առաջարկները, եթե դրանք հիմնավորված են, համապատասխանում են մասնագիտությանը և չեն կրկնվում:

10. Միևնույն թեմայի ընտրությունը կրթահամալիրի սովորողների կողմից արգելվում է: Եթե նույն թեմային հավակնում են մեկից ավելի սովորողներ, ապա նախապատվությունը տրվում է առավել բարձր առաջադիմություն ունեցողին: Հավասար առաջադիմության դեպքում նախապատվությունը տրվում է այն անձին, ով ամբիոն կներկայացնի թեմային նվիրված առավել հիմնավոր ռեֆերատ:

11. Յուրաքանչյուր ուսումնական տարում ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի թեմաները ենթակա են վերանայման և չեն կրկնում նախորդ ուստարվա համար առաջարկված թեմաներին:

12. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի թեմաները չպետք է կրկնվեն դրանց պաշտպանությունից հետո առնվազն 3 տարի:

13. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի կատարման համար ամբիոնի կողմից առաջարկվում է ղեկավար:

14. Սովորողների ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի թեմաներն ու նշանակված ղեկավարների ցուցակները ներկայացվում են ուսումնական ստորաբաժանման խորհրդի հաստատմանը (փոփոխմանը):

3. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի կառուցվածքն ու ձևավորումը

15. Ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը կազմված են՝

1) հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով տիտղոսաթերթերից,
2) բովանդակությունից (ցանկից),
3) ներածությունից,
4) աշխատանքի հիմնական մասից (գլուխներ և պարագրաֆներ),

5) եզրակացությունից,

6) օգտագործված գրականության ցանկից,

7) հավելվածներից (եթե այդպիսիք առկա են):

16. Ավարտական աշխատանքի ներածությունում առնվազն անհրաժեշտ է ներկայացնել հետազոտության թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական հիմքը և խնդիրները, հետազոտության նորմատիվ հիմքը և աշխատանքի կառուցվածքը:

17. Մագիստրոսական թեզի ներածությունում անհրաժեշտ է ներկայացնել հետազոտության թեմայի արդիականությունը, թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության մեթոդաբանական հիմքը, հետազոտության տեսական հիմքը, հետազոտության փորձառնական (էմպիրիկ) հիմքը, հետազոտության նորմատիվ հիմքը և թեզի կառուցվածքը:

18. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի հիմնական մասը ներկայացվում է գլուխներով: Գլուխները, որպես կանոն, բաղկացած են պարագրաֆներից:

19. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի եզրակացությունը պետք է շարադրված լինի հակիրճ, ընդգրկի հիմնախնդրի արդի վիճակի գնահատականը և լուծման վերաբերյալ առաջարկությունները:

20. Ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը ներկայացվում են համակարգչային ձևավորման տեսքով՝ պահպանելով հետևյալ կանոնները.

1) Ծավալը՝ ավարտական աշխատանքի համար՝ 40-ից 50 էջ, իսկ մագիստրոսական թեզի համար՝ 60-ից 80 էջ: Նշված ծավալում չեն ընդգրկվում մագիստրոսական թեզի և ավարտական աշխատանքի հավելվածները: Էջանշումը կատարվում է էջի ներքևում՝ մեջտեղում: Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի տեքստը գրվում է միայն թերթերի դիմային (առաջին) էջի վրա: Բոլոր գրված էջերը համարակալվում են: Տիտղոսաթերթերը նույնպես ընդգրկվում են համարակալման մեջ, բայց դրանց վրա էջի համարներ չեն դրվում: Հավելվածները համարակալվում են ինքնուրույն կերպով՝ հիմնական տեքստից առանձին: Յուրաքանչյուր հավելված պետք է ունենա անվանում, որն արտացոլում է դրա բովանդակությունը:

2) Սովորողի կողմից պատրաստվող ավարտական աշխատանքի տիտղոսային էջին ներկայացվում են հետևյալ պահանջները՝ էջի վերևի հատվածում՝ կենտրոնում, հետևյալ հերթականությամբ նշվում են՝ «ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ», «ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ», «ԱՄԲԻՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ», «ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ»: Նշված տեղեկություններից հետո էջի ձախ հատվածում նշվում են՝ հեղինակի անունը և ազգանունը, կոչումը, թեմայի անվանումը, ղեկավարի անունը և ազգանունը, կոչումը, գիտական աստիճանը և գիտական կոչումը (Ձև 1):

3) Մագիստրոսական թեզի տիտղոսային էջին ներկայացվում են հետևյալ պահանջները՝ էջի վերևի հատվածում՝ կենտրոնում, հետևյալ հերթականությամբ նշվում են՝ «ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ», «ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ», «ԱՄԲԻՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ», «ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ»: Նշված տեղեկություններից հետո էջի ձախ հատվածում նշվում են՝ հեղինակի անունը և ազգանունը, կոչումը, թեմայի անվանումը, ղեկավարի անունը և ազգանունը, կոչումը, գիտական աստիճանը և գիտական կոչումը (Ձև 2):

4) Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի գլուխները և պարագրաֆները տեքստում անհրաժեշտ է առանձնացնել մուգ տառատեսակով (**B-bold**): Յուրաքանչյուր գլուխ անհրաժեշտ է սկսել նոր էջից:

5) Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի տեքստը պատրաստվում է՝ Microsoft Office Word ծրագրով, թղթի ֆորմատը՝ A4, տառատեսակը՝ Unicode, տառաչափը՝ 12, տողային միջակայքը՝ 1.5, լուսանցքները՝ ձախից – 3.0 սմ, աջից – 1.5 սմ, ներքևից և վերևից – 2.0 սմ: Նոր պարբերությունը սկսել 1.0 սմ խորքից:

6) Տեքստն ամբողջությամբ հավասարեցվում է ըստ լայնության:

7) Հղումներին ներկայացվում են տեխնիկական հետևյալ պահանջները. տառատեսակը՝ Unicode, տառաչափը՝ 10, տողային միջակայքը՝ 1.0:

8) Հղումները ներառում են հետևյալ տվյալները՝

ա. աշխատության հեղինակի ազգանունն ամբողջությամբ, անվան և հայրանվան առաջին տառերը,

բ. աշխատության լրիվ անվանումը,

գ. տպագրության վայրը,

դ. տպագրության տարին,

ե. այն էջերի հերթական համարները, որտեղ հանդիպում է մեջբերված տեքստը (օր.՝ Պողոսյան Պ.Պ. Իրավագիտություն: Երևան, 2014: էջ 26-27:):

9) Եթե հղում է կատարվում գիտական հոդվածների ժողովածուին կամ ամսագրին, ապա այն ունենում է հետևյալ տեսքը՝

ա. հեղինակի ազգանունն ամբողջությամբ, անվան և հայրանվան առաջին տառերը,

բ. հոդվածի լրիվ անվանումը,

գ. ժողովածուի կամ ամսագրի անվանումը,

դ. գիտական հանդեսի կամ ամսագրի հերթական և ընդհանուր համարը,

ե. տպագրության տարին,

զ. այն էջերի հերթական համարները, որտեղ հանդիպում է մեջբերված տեքստը (օր.՝ Պողոսյան Պ.Պ. Ապացուցման հիմնահարցերը քրեական դատավարությունում // Իրավագիտության հարցեր: № 13 (79), 2014: էջ 26-27:):

10) Ինտերնետային կայքին հղում կատարելիս ինտերնետ-հասցեն նշվում է ամբողջությամբ: Օր.՝ URL:https://www.e-gov.am/u_files/arc_voroshum/Mar9-6_1.pdf.:

11) Օգտագործված գրականության ցանկում նշվում են օգտագործված աղբյուրների (գիրք, իրավական ակտ, ինտերնետային կայք և այլն) վերաբերյալ բոլոր տվյալները, այդ թվում՝ գրքի լրիվ էջերի քանակը:

12) Իրավական ակտերի վերաբերությամբ նշվում են՝ դրա անվանումը, իրավական ակտի ընդունման տարեթիվը, իրավական ակտի համարը, ՀՀ պաշտոնական տեղեկագրի հերթական և ընդհանուր համարը, որտեղ այն տպագրվել է, և նշված տեղեկագրում հոդվածի համարը, որում իրավական այդ ակտը տեղակայվել է (օր.՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք /27. 10. 2007 թ., ՀՕ-223-Ն, ՀՀՊՏ 2007.11.28/59 (583): Հոդ.1197:):

4. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության նախապատրաստումը

21. Ավարտական աշխատանքի պաշտպանությունից առնվազն վեց շաբաթ առաջ իրականացվում է ավարտական աշխատանքի ղեկավարի ստուգարքի (դիֆստուգարք) հանձնում: Ավարտական աշխատանքի ղեկավարի ստուգարքը (դիֆստուգարք) դրական է գնահատվում, եթե ավարտական աշխատանքը համապատասխանում է սույն կարգի պահանջներին: Ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը թողարկող ամբիոն են ներկայացվում դրանց պաշտպանությունից առնվազն մեկ ամիս առաջ:

22. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի վերաբերյալ ամբիոնի կողմից պատրաստվում է կարծիք, որը քննարկվում է ամբիոնի նիստում: Ամբիոնի տվյալ նիստին կարող է մասնակցել նաև սովորողի ղեկավարը:

23. Ամբիոնի կարծիքը պարունակում է հիմնավորված հետևություն սույն կարգի պահանջներին ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի համապատասխանության, ինչպես նաև եզրահանգում՝ ավարտական աշխատանքը կամ մագիստրոսական թեզը հրապարակային պաշտպանության ենթակա լինելու մասին:

24. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի հեղինակն ու ղեկավարը ստորագրում են հայերեն լեզվով տիտղոսաթերթի վրա:

25. Ամբիոնը կազմակերպվում է ավարտական աշխատանքի արտաքին կամ ներքին, իսկ մագիստրոսական թեզի դեպքում միայն արտաքին գրախոսում:

26. Ամփոփիչ ատեստավորման մեկնարկից առնվազն երեք օր առաջ ամբիոնը կրթահամալիրի ռեկտորին ուղղված զեկուցագրով ներկայացնում է տեղեկանք՝ ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի, ինչպես նաև դրանց վերաբերյալ ամբիոնի կարծիքի և արտաքին գրախոսականի մասին: Տեղեկանքում նշվում են նաև ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ չներկայացրած և վերահանձնող շրջանավարտների վերաբերյալ տվյալները:

27. Սույն կարգի 26-րդ կետով նախատեսված զեկուցագիրը և տեղեկանքը, ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո, պահվում են քարտուղարությունում:

Ավարտական աշխատանքը կամ մագիստրոսական թեզը պահվում են ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ընդհանուր գրադարանում: Ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի վերաբերյալ ամբիոնի կարծիքը և արտաքին գրախոսականը պահվում են ամբիոնում:

28. Ավարտական աշխատանքը կամ մագիստրոսական թեզն արտաքին գրախոսման են ենթակա համապատասխան ոլորտի գիտական աստիճան ունեցող անձի կամ համապատասխան մասնագետի կողմից: Կրթահամալիրի հաստիքային աշխատողը չի կարող լինել արտաքին գրախոսող:

29. Արտաքին գրախոսականը պարունակում է ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի շրջանակներում կատարված հետազոտության համապարփակ ուսումնասիրման արդյունքները, որի շրջանակներում գնահատական է տրվում և՛ հետազոտության ընթացքին և՛ հետազոտության արդյունքում արված եզրակացությանը:

5. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունը

30. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունը կատարվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի դռնբաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Նախագահի կամ նրան փոխարինողի ներկայությունը պարտադիր է: Բացի հանձնաժողովի անդամներից պաշտպանությանը կարող են մասնակցել նաև ղեկավարը և գրախոսողը: Պաշտպանությունը տեղի է ունենում հրապարակային և բանավոր կարգով:

31. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի ձևավորումը կատարվում է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի սահմանած պահանջների համաձայն:

32. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացակարգային պահանջների համաձայն՝ Կրթահամալիրի սովորողների (բացառությամբ պետական պատվերի շրջանակներում սովորող ոստիկանության և փրկարար ծառայողների) ամփոփիչ ատեստավորման ընթացքն արձանագրվում և ձայնագրվում է: Ձայնագրությունը պահպանվում է արդյունքները հրապարակելուց հետո 6 ամիս:

33. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի բովանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր սովորողի տրվում է մինչև 10 րոպե ժամանակ: Ելույթի ընթացքում պետք է ներկայացվի աշխատանքի արդիականությունը, ուսումնասիրված հիմնախնդիրը, աշխատանքի համառոտ բովանդակությունը՝ հիմնական ուշադրությունը դարձնելով եզրակացության հատվածին:

34. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի բովանդակությունը ներկայացնելուց հետո հանձնաժողովի քարտուղարն ընթերցում է ամբիոնի կարծիքը և, գրախոսողի բացակայության դեպքում, նաև արտաքին գրախոսականը, որից

հետո սովորողը պատասխանում է ամբիոնի կարծիքում և արտաքին գրախոսականում առկա նկատառումներին կամ դիտողություններին՝ համաձայնելով դրանց հետ կամ ներկայացնելով իր տեսակետի հիմնավոր բացատրությունը:

35. Ամբիոնի կարծիքում և արտաքին գրախոսականում առկա նկատառումներին կամ դիտողություններին պատասխանելուց հետո հանձնաժողովի անդամները և պաշտպանությանը ներկա գտնվող անձինք սովորողին կարող են հարցեր ուղղել:

36. Միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորողի հեղինակած ավարտական աշխատանքի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար» գնահատականներով՝ գնահատման 10 միավորանոց սանդղակով՝ ստորև նշված սխեմային համապատասխան.

Գնահատման միավոր	Գնահատականը տառանշումով
9-10	Գերազանց
7-8	Լավ
4-6	Բավարար
0-3	Անբավարար

37. Բակալավրիատի սովորողի հեղինակած ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար» գնահատականներով՝ գնահատման 20 միավորանոց սանդղակով՝ ստորև նշված սխեմային համապատասխան.

Գնահատման միավոր	Գնահատականը տառանշումով
18-20	Գերազանց
13-17	Լավ
8-12	Բավարար
0-7	Անբավարար

38. Միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորողի հեղինակած ավարտական աշխատանքի պաշտպանության գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

Աղյուսակ 1

№	**Չափանիշը**	**Առավելագույն միավորը**
1	Ներկայացման որակը	4
2	Ձևակերպման որակը և կատարման ինքնուրույնության աստիճանը	4
3	Արդիականությունը (նորույթը)	2
	Ընդամենը՝	**10**

39. Բակալավրիատի սովորողի կողմից պատրաստած ավարտական աշխատանքի պաշտպանության գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

Աղյուսակ 2

№	**Չափանիշը**	**Առավելագույն միավորը**
1	Ներկայացման որակը	6
2	Ձևակերպման որակը	6
3	Կատարման ինքնուրույնության աստիճանը	6
4	Արդիականությունը (նորույթը)	2
Ընդամենը՝		**20**

40. Մագիստրոսական թեզի պաշտպանության գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

Աղյուսակ 3

№	**Չափանիշը**	**Առավելագույն միավորը**
1	Արդիականությունը (նորույթը)	6
2	Կատարման ինքնուրույնության աստիճանը	6
3	Ձևակերպման որակը	4
4	Ներկայացման որակը	4
Ընդամենը՝		**20**

41. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքները հայտարարվում են նույն օրը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո մեկ ժամվա ընթացքում:

42. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության հանձնաժողովի բոլոր որոշումները քարտուղարի կողմից արձանագրվում են արձանագրությունների մատյանում: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի՝ նիստին մասնակցած անդամները:

43. Ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանությանն անհարգելի չներկայանալը հավասարեցվում է «անբավարար» գնահատականի: Ավարտական աշխատանքը չներկայացնելը հավասարեցվում է «անբավարար» գնահատականի: Ավարտական աշխատանքը չներկայացնելու դեպքում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունում կատարվում է «Չի ներկայացրել» նշումը: Ավարտական աշխատանքը չներկայացրած անձը, ցանկության դեպքում, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորին հասցեագրված

զեկուցագրի (դիմումի) հիման վրա, հաջորդ ուսումնական տարում շարունակում է նախապես հաստատված թեմայով հետազոտությունը՝ ամբիոնում:

44. Ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանությանը չներկայացած անձը կարող է դիմել ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորին՝ թույլատրելու իրեն մասնակցել ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանությանը՝ զեկուցագրում (դիմումում) շարադրելով չներկայանալու հարգելի պատճառները:

45. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի կողմից կրթահամալիրի սովորողի խնդրանքը բավարարելու դեպքում ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանությունը տեղի է ունենում նույն կուրսի մյուս խմբերի պաշտպանության ժամանակ կամ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի կողմից նշանակած օրը:

46. «Անբավարար» գնահատական ստանալը կամ պաշտպանությանը անհարգելի կերպով չներկայանալը չի զրկում անձին ավարտական աշխատանքը կամ մագիստրոսական թեզը հետագայում պաշտպանելու իրավունքից: Ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանության վերահանձնման ցանկության դեպքում, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորին հասցեագրված զեկուցագրի (դիմումի) հիման վրա, սովորողը կցվում է համապատասխան ամբիոնին և ստանում ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի նոր թեմա, իսկ ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պատրաստումն ու պաշտպանությունն իրականացվում է ընդհանուր կարգով:

Ձև 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

---------- *ԱՄԲԻՈՆ*

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հեղինակ՝ ուսիկանության ավագ սերժանտ Պողոս Պողոսի Պողոսյան

Թեմա՝ Վարչական իրավահարաբերություններ

Ղեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Սիմոնյան

Հանձնված է «_____»_____ 2025 թ.

Գրախոսված է «_____»_____2025 թ.

«Թույլատրել պաշտպանության»

ամբիոնի պետ, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
ուսիկանության մայոր _____ Գ. Խուդոյան

Պաշտպանված է «_____»_____ 2025թ.

Գնահատականը _____

Պետական քննական հանձնաժողովի
նախագահ _____

Ե Ր Ե Վ Ա Ն 2 0 2 5

Ձև 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

----------ԱՄԲԻՈՆ

Մ Ա Գ Ի Ս Տ Ր Ո Ս Ա Կ Ա Ն Թ Ե Զ

Հեղինակ՝ ոստիկանության ավագ սերժանտ Պողոս Պողոսի Պողոսյան
Թեմա՝ Քրեական դատավարության սուբյեկտները

Ղեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Սիմոնյան

Հանձնված է «_____»_____2025թ.

Գրախոսված է «_____»_____2025 թ.

«Թույլատրել պաշտպանության»

ամբիոնի պետ, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
ոստիկանության գնդապետ _____Ա. Հովհաննիսյան
Պաշտպանված է «_____»_____2025թ.

Գնահատականը _____

Պետական քննական հանձնաժողովի
նախագահ _____

Ե Ր Ե Վ Ա Ն 2 0 2 5